

րանան, կանաչեղէն կը հաւաքեն, մի մասը կուտեն, մի մասն ևս հայ գիւղերու մէջ ցորեանի հետ փոխանակելով՝ կապրին միջոց մի. սակայն դարձեալ նօթի մերկ. շատ անգամ մահուան մօտ հիւանդն անխնամ, առանց անկողնոյ թուներայ շուրթն թոյլ տալով՝ մինչև երեկոյն կը հեռանայ և դարձած միջոցին մեռած կը գտնէ:

Գրացիք միմեանց վերան գլթութիւն չունին, խիղճն գրեթէ մեռած է սոցա մէջ:

Ոչխար պահելն քրդու ընդհ. յատկութիւնն է. սակայն այս գիւղացիք մեծաւ մասամբ զուրկ են, քանի ազդեցիք անձինք միայն ունին:

Այս գիւղացիք ունին շէյխ մի և կրօնական ուսուցիչ, ամբողջ դաշտիս մէջ առաջին գիւղն է, որ մի աննշան ուսումնարան ունի:

Գողերու որջ կարելի է համարուիլ գիւղս. 15 այլ և այլ ցեղերու մէջ գտնուած կարգ մի անուղայ մարդիկ հետզհետէ հաւաքուած են այս տեղ, որք տուն, տէղ և արտ չունին:

ՀԱՃԻ-ՍԱՖԱՐ.— Այս գիւղը դաշտի միջավայրն՝ $\frac{5}{4}$ ժամ Աշխալի գիւղի հարաւն արեւմտեան կողմն ամենապատուական գիրքով և ջրերով մի գիւղ է. որոյ սահմանը ևս յարեւելից կը հասնի Գաշլի գետ. հարաւից Գարաքիլիսի և Հիզանի քաւառները. արեւմտից մինչև Ֆէրան:

Այս գիւղն ևս պատերազմից առաջ կը բնակէին հայք, պատերազմից յետոյ քրդեր, և այժմ՝ դաղթական թերեքեմէ և Կաղզուանցի թուրքեր, միայն երկու տուն հայ կայ, որոց մին Ղազարն, որ նահապետական և հիւրասէր տուն մի էր:

Գիւղիս բնակչաց թիւը կը հասնի 35 տան: